ԼՂԻՄ-Ի ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում իրադրությունը վերահսկում են ԽՍՀՄ ՆԳՄ ներքին զորքերի ստորաբաժանումները և տեղի միլիցիան: Անցած երկուշաբթին և հուլիսի լույս 18-ի գիշերը այստեղ անցան համեմատաբար հանգիստ:

Այն կապակցությամբ, որ իրավակարգի պահպանման հիմնական ծառայությունը վարում են ներքին զորքերը, որոշված է խորհրդային բանակից հատուկ շրջանի զինվորական պարետ, գնդապետ Գ. Մուսատովի փոխարեն պարետ նշանակել ներքին զորքերի գեներալ-մայոր Վ. Սաֆոնովին:

Ցավոք, երեկ՝ հուլիսի 17-ին էլ մարզային հեռուստատեսությունը հնարավորություն չունեցավ իր ծրագրով եթեր դուրս գալ, քանի որ Շուշիի վերահեռարձակիչ կայանի աշխատողները չէին միացրել համապատասխան հեռուստահաղորդման կանալը: Շարունակում է լույս չտեսնել նաև «Խորհրդային Ղարաբաղ»—«Սովետսկի Կարաբախ» թերթը:

Կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի բյուրոյի և ժողովրդական դեպուտատների քաղաքային խորհրդի գործկոմի հերթական համատեղ նիստում քննարկվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ԼՂԻՄ-ի հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջիկայում ինքնավար մարզ գալու հարցը: Ընդգծվեց, որ անհրաժեշտ է պայմաններ ստեղծել նրա նորմալ աշխատանքի համար:

— Ես հանձնաժողովի եզրակացությունից շատ ակնկալիքներ ունեմ,— Արմենպրեսի թղթակցին ասաց ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ Բորիս Դադամյանը: —Ժամանակն ապացուցել է, որ ԼՂԻՄ-ի պրոբլեմի լուծման ձգձգումը երկրի քարտեզին մերկացրել է ազգամիջյան հարաբերությունների վերաբերող ավելի ավելի շատ ցավոտ կետեր: Գտնում եմ, որ երկրի ղեկավարությունը այսօրվա դրությամբ բավական խորամուխ է եղել ղարաբաղցիների բարձրացրած հարցի էությանը, որն անպայման քաղաքական լուծում է պահանջում: Մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը միտված ջանքերը միայն հաջողության չեն հանգեցնի, քանի որ մեր շարժումը հույժ ազգային է, արմատապես զերծ ազգայնական գաղափարներից: Ղարաբաղցիները, ի լուր ամենքի հայտարարելով իրենց իղձերը, ելել և ելնում են ազգերի ինքնորոշման իրավունքից: Այսինքն, մենք չենք պնդում, թե չենք ուզում ապրել ադրբեջանցիների հետ: Հարցն այլ է. ինչու մենք՝ Արցախի հայերս, չենք կարող ապրել Խորհրդային Հայաստանի հետ միևնույն ընտանիքում:

Ես լավատես եմ,— շարունակեց Բ. Դադամյանը: —Եթե արդարություն կա, ապա այն պետք է դրսևորվի Ղարաբաղի պրոբլեմի առնչությամբ: Կցանկանայի հուսալ, որ հանձնաժողովին կհաջողվի ըմբռնել ղարաբաղցիների պահանջների արդարացիությունը: Իմ կարծիքով, ներկա փուլում առնվազն հարկավոր է մարզում մտցնել ադրեզիդենտական կառավարում: Սա պետք է հարմար գա ինչպես հայկական, այնպես էլ ադրբեջանական կողմին:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)
Ստեփանակերտ